

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2022 թվականի սեպտեմբերի 5-ի № 7

Լսելով «ՀՊՄՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների գնահատում» կարգի հաստատման մասին հարցը: (Զեկուցող՝ Սամվել Ասատրյան)

Համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել համալսարանի «ՀՊՄՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների գնահատում» կարգը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ


ՀՊՄՀ-ՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ և ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՈԿՀ

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ և ՈՐԱԿԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է
«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2022թ. սեպտեմբերի 5-ի, №1 նիստում
գիտական խորհրդի նախագահ՝




Արթուրի Գևորգյան

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՊՄՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների
գնահատում

ԿԱՐԳ

Երևան 2022

ՄՇԱԿՎԱԾ Է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի Կրթական բարեփոխումների և որակի վարչության կողմից:

ԿԱՏԱՐՈՂ՝

Ասատրյան Ս. Մ., Կրթական բարեփոխումների և որակի վարչության պետ,

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կարգը սահմանում է ՀՊՄՀ շահակիցների ներգրավման և կարիքների գնահատման մեխանիզմները:

1.2 ՀՊՄՀ-ն պարբերաբար իրականացնում է իր շահակիցների ներգրավվածության ապահովում, կարիքների ուսումնասիրություն, գնահատում և հաշվի է առնում արդյունքները՝ ՀՊՄՀ-ի ռազմավարության փոփոխման, զարգացման և կատարելագործման համար:

1.3 ՀՊՄՀ-ի շահակիցներն են՝

- ուսանողները,
- ՀՊՄՀ-ի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը,
- դիմորդը,
- շրջանավարտները,
- գործատուները,
- հասարակությունը և պետական մարմինները:

II. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎՈՒՄ

2.1 Համալսարանի շահակից կողմերը ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, մասնավորապես՝

- համալսարանի կառավարման խորհուրդներում՝ որպես պաշտոնական մասնակիցներ (ծայնի իրավունքով),
- մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման և վերանայման գործընթացներում,
- համալսարանի ինքնագնահատման և այլ գնահատման գործընթացներում,
- հարցումների անցկացման գործընթացում՝ կանոնավոր հիմունքներով:

2.2 Ներքին շահակիցների ներգրավվածություն

2.2.1 Ուսանողների ներգրավվածություն

2.2.1.1 Համալսարանի ուսանողական համայնքի ներկայացուցիչները՝

- Ներգրավված են Համալսարանի հոգաբարձուների խորհրդում (ծայնի իրավունքով),

- ընդգրկված են համալսարանի գիտական խորհրդում և ստորաբաժանումների որակի ապահովման հանձնախմբերում,
- մասնակցում են որակի ապահովման գործընթացներում՝ որպես ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն) ներկայացուցիչներ,
- ներգրավված են դասավանդման և պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման գործընթացում,
- համալսարանի ծառայությունների, ռեսուրսային բազայի որակի գնահատման գործընթացում՝ հարցումների միջոցով:

2.2.1.2 Ուսանողները կանոնավոր կերպով մասնակցում են դասախոսի և դասավանդման որակի գնահատմանը՝ «Դասախոսը ուսանողի աչքերով», որն իրականացվում է յուրաքանչյուր տարի: Գնահատման արդյունքները վերլուծվում և օգտագործվում են պրոֆեսորադասախոսական կազմի վարկանիշավորման ժամանակ:

2.2.1.3 Ուսանողները ներգրավվում են համալսարանի արտաքին գնահատման գործընթացներում՝ տարբեր փուլերում:

2.2.1.4 Ուսանողները ներգրավված են համալսարանի ինքնագնահատման և ինքնավերլուծության գործընթացում որպես՝

- հարցումների անմիջապես մասնակից,
- հարցման անցկացնող,
- հարցաթերթիկների տվյալները կոդավորող,
- ինքնագնահատման համար անհրաժեշտ տվյալները հավաքագրող:

2.2.1.5 Ուսանողները ներգրավված են՝

- համալսարանի կրթական ռեսուրսային բազայի գնահատման գործընթացում,
- համալսարանի ծառայությունների գնահատման գործընթացում,
- վարչական կազմի գործունեության գնահատման գործընթացում,
- մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի գնահատման գործընթացում,
- գիտահետազոտական աշխատանքներում մասնակցության աստիճանի գնահատման համար ՈւԽ-ում և ՈւԳ-ում, որը նշանակում է իր ներկայացուցիչներին համալսարանի պաշտոնական մարմիններում և

ներկայացնում են համալսարանի ուսանողական կազմակերպությունների շահերը:

2.2.1.6 Ուսանողները՝

- ստեղծում են առանձին առարկաների ուսանողական ասոցիացիաներ,
- կազմակերպում են հանդիպումներ, բանավեճեր,
- ազատ են մասնակցելու բուհում տեղի ունեցող բոլոր միջոցառումներին և որոշումների կայացմանը:
- հատման գործընթացում:

2.2.2 Պրոֆեսորադասախոսական կազմը

2.2.2.1 Համալսարանի դասախոսական կազմի ներկայացուցիչները ներգրավված են՝

- համալսարանի գիտական և այլ խորհուրդներում,
- հարցումների անցկացման գործընթացում,
- համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտների անցկացման գործընթացում,
- համալսարանի գիտակրթական գործունեության գնահատման և իրենց կարիքների վերհանման գործընթացում:

2.2.2.2 Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները ներգրավված են՝

- Մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում, առարկայական նկարագրերի մշակման և վերանայման գործընթացներում,
- ամբիոնի այլ դասախոսի դասավանդման որակի գնահատման գործընթացում:

2.2.2.3 Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ներգրավված է՝

- համալսարանի կրթական համակարգի գնահատման¹ գործընթացում,
- համալսարանի ռեսուրսային բազայի գնահատման գործընթացում,

¹ Որպես գնահատման հիմնական մեխանիզմ է դիտարկվում հարցումը, իսկ գործիքը՝ հարցաշարերը:

- աշխատանքային միջավայրի գնահատման գործընթացում,
- համալսարանի գիտահետազոտական ոլորտի գնահատման գործընթացում:

2.3 Արտաքին շահակիցների ներգրավվածություն

2.3.1 Շրջանավարտներ

2.3.1.1 Համալսարանի շրջանավարտների ներկայացուցիչները ներգրավված են

- համալսարանի որակի ապահովման գործընթացներում,
- համալսարանի կրթական միջավայրի գնահատման գործընթացում,
- համալսարանի մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման գործընթացում:

2.3.2 Գործատուներ

2.3.2.1 Համալսարանի գործատուների ներկայացուցիչները ներգրավված են`

- Համալսարանի կառավարման գործընթացներում (խորհուրդներում ձայնի իրավունքով, աշխատանքային խմբերում),
- համալսարանի շրջանավարտների գիտելիքների և կարողությունների մակարդակի գնահատման գործընթացում,
- մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման և վերամշակման գործընթացում,
- մասնագիտական կրթական ծրագրերի գնահատման գործընթացներում,
- շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանության անցկացման և գնահատման գործընթացում:

2.3.2.2 Գործատուների առանձնահատկությունները, որպես շահակիցներ, կրում է երկկողմ բնույթ: Մի կողմից նրանք համալսարանի կրթական ծառայությունների սպառողներն են, մյուս կողմից` այս կամ այն տեսակի ծառայության պատվիրատուները:

2.3.2.3 Գործատուները փոխգործակցում են ներքին շահակիցների` ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

2.3.2.3.1 Գործատու-ուսանող փոխկապակցվածություն:

Ուսանողը շահագրգռված է որակյալ կրթություն ստանալու մեջ, քանի որ դա կարող է հաջող մասնագիտական աշխատանքային զբաղվածություն երաշխավորել:

Ընդ որում ապագա շրջանավարտի հիմնական գործնական կարողությունները և հմտությունները հնարավոր է որոշել ուսումնամանկավարժական պրակտիկաների ժամանակ, երբ տեղի է ունենում ուսանող-գործատու առաջին փոխգործունեությունը:

2.3.2.3.2 Գործատու - համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմ փոխկապակցվածություն: Համալսարանի մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման և իրականացման համար համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը օպտիմալ բովանդակությամբ մասնագիտության կրթական ծրագիր ստանալու համար համագործակցում է կրթության, սոցիալական, հումանիտար, բնական գիտությունների և արվեստի ոլորտների գործատուների հետ:

2.3.2.3.3 Գործատուների և համալսարանի փոխգործունեության հիմնական ձևերն են՝


- Համալսարանի գործունեության և կրթության որակի արտաքին գնահատման տարբեր մեխանիզմների ներդրում (վարկանիշավորում և այլն):
- Համալսարանի կարիերայի կենտրոնի ներդրում և զարգացում:
- Ռազմավարական համագործակցում գործատուների:
- Համալսարանում բաց դռների օրերի անցկացում՝ աշխատաշուկայի ներկայացուցիչների ներգրավումով:
- Ուսանողների շրջանում տեղեկատվության ապահովում թափուր աշխատատեղերի, վերապատրաստումների, գործատուների պահանջների վերաբերյալ:
- Ամբիոնների կրթական ծրագրերի պարտաստում և ցուցադրում գործատուների հետ համատեղ:
- Կոնֆերանսների, օլիմպիադաների անցկացում, գործատուների մասնակցություն ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում:
- Համալսարանում գործատու-կազմակերպությունների կողմից ցուցադրումների կազմակերպում տարբեր ձևերի տեսքով՝ բաց դասեր, մաստեր-կլասեր և այլն:
- Գործատուների մասնակցությունը կրթական գործընթացում՝ դասավանդում:
- Ուսանողների և շրջանավարտների տվյալների բազայի և հիմնական աշխատատեղերի տվյալների բազայի /գործատուների բազա/ ստեղծում
- Տվյալների բազան հասանելիության ապահովում խոշոր կադրային գործակալությունների և գործատուների համար

- Խորհրդատվության և հոգեբանական աջակցության ցուցաբերում աշխատանքի տեղավորման գործընթացում
- Համագործակցություն հաստատությունների, գործատուների հետ
- Հաստատություններում և կազմակերպություններում մասնագետների կարիքների վերլուծության իրականացում
- Կազմակերպությունների, գործատուների հետ աշխատատեղերի ներկայացման հանդիպումների կազմակերպում և անցկացում

III. ՃԱՐԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

3.1. Համալսարանի որակի ապահովման գործընթացներում շահակիցների ներգրավման համար անհրաժեշտ է մշակել և ներդնել ներգրավման մեխանիզմներ:

3.2. Համալսարանի կողմից մշակված և ներդրված հիմնական ներգրավման մեխանիզմները ըստ շահակից կողմի տեսակի.



IV. ՃԱՐԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐՔԻՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

4.1 Շահակիցների կարիքների գնահատումը իրականացվում է հետևյալ նպատակով՝

- ՀՊՄՀ-ի և շահակիցների միջև կապի ամրապնդում,
- ՀՊՄՀ-ի մշտական բարձր վարկանիշի ամրապնդում,
- ՀՊՄՀ-ի ծառայությունների որակի շարունակական բարձրացում:


4.2 Շահակիցների կարիքների գնահատումը ներառում է՝

- ՀՊՄՀ-ի միջավայրից և մատուցվող ծառայություններից ուսանողների և դասախոսական անձնակազմի բավարարվածության գնահատումը:
- ՀՊՄՀ-ի կողմից մատուցվող ծառայություններից շրջանավարտների, գործատուների և այլ արտաքին շահակիցների կարիքների և պահանջների ուսումնասիրումն ու գնահատումը:

4.3 Շահակիցների կարիքների ուսումնասիրման մեթոդներն են՝

- փորձագիտական գնահատումը,
- հարցումներ,
- փաստաթղթերի ուսումնասիրությունը և այլն:

4.4 Շահակիցների կարիքների գնահատումը բաղկացած է հետևյալ փուլերից՝



4.5 Շահակիցների կարիքների գնահատման ցուցիչներն են (ինդիկատորները)՝

- շահակիցների պահանջները և սպասելիքները,
- ուսանողների առաջադիմության և ունակությունների մակարդակն ու որակը,
- ուսումնամեթոդական ռեսուրսները,
- դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի որակը,
- ՀՀՄՀ-ի ենթակառուցվածքի և կրթական գործունեության որակը,
- շրջանավարտների պահանջարկը աշխատաշուկայում և այլն:

4.6 Շահակիցների բավարարվածության բարձրացման նպատակով հաշվի է առնվում և վերլուծվում է հետևյալ տեղեկատվությունը՝

- կոնկրետ շահակիցների խմբի պահանջները,
- մշտադիտարկման արդյունքները,
- կայացվող որոշումները:

4.7 Դրված խնդիրների լուծումը և շահակիցների բավարարվածության աստիճանի վերաբերյալ տեղեկատվությունը հիմք է հանդիսանում որակի կառավարման համակարգի ձևավորմանը և զարգացմանը:

4.8. Հաշվետու տարում շահակիցների կարիքների ուղղությամբ տարվող աշխատանքները պարբերաբար մշտադիտարկվում են ՀՊՄՀ-ի կողմից, իսկ յուրաքանչյուր տարի իրականացվում է ազդեցության /վերջնական/ գնահատում:

4.9. Շահակիցների կարիքների գնահատման մշտադիտարկումը ուղղված է ՀՊՄՀ-ի որակի ապահովմանը, բուհի հիմնական խնդիրների լուծմանը:

V. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

5.1. Ներքին շահակիցներ

5.1.1 ՀՊՄՀ-ի ուսանողների կարիքների բացահայտման մեխանիզմներ

5.1.1.1 Ուսանողների կարիքներն ուսուցման ընթացքում գնահատվում է հետևյալ հիմնական ճանապարհներով՝

- ուսումնառողների բողոքների ուսումնասիրություն,
- այլ մեթոդների կիրառում:

5.1.1.2 Բավարարվածության գնահատումն անցկացվում է հետևյալ հարցերի շուրջ՝

- մասնագիտության կրթական ծրագրերի և ուսուցանվող դասընթացների բովանդակությունը,
- դասավանդման մեթոդները,
- լսարանների կահավորվածությունը,
- ուսումնամեթոդական ապահովվածությունը,
- քննություններ և գիտելիքի ստուգման այլ ձևերը:

5.1.1.3 Ուսանողների բավարարվածության գնահատումը ներառում է՝

- ուսանողների բավարարվածության գնահատումը դասավանդման գործընթացից և գնահատման համակարգից,
- բավարարվածության գնահատումը կրթական ծառայությունների որակից

- բավարարվածության գնահատումը ՀՊՄՀ-ի կողմից տրամադրվող այլ ծառայություններից,
- բավարարվածության գնահատումը ռեսուրսային բազայից,
- բավարարվածության գնահատումը վարչական կազմի կողմից տրված ծառայություններից:

5.1.2 Պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների բացահայտման մեխանիզմներ

5.1.2.1 Պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածությունը գնահատվում է՝

- առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների (ամբիոնների) նիստում և այլ միջոցառումներին քննարկումների միջոցով,
- անհատական և կոլեկտիվ բողոքների ուսումնասիրման միջոցով,
- այլ մեթոդների կիրառման միջոցով:

5.1.2.2 Բավարարվածության գնահատումը անցկացվում է հետևյալ հարցերի շուրջ՝

- դասավանդման համար անհրաժեշտ ռեսուրսային բազա,
- բարոյահոգեբանական վիճակ,
- այլ հարցեր:

5.1.2.3 Դասախոսական կազմի բավարարվածության գնահատումը ներառում է՝

- բավարարվածության գնահատումը դասավանդման համար նախատեսված ռեսուրսային ապահովվածությունից,
- բավարարվածությունը ՀՊՄՀ-ի ընդհանուր միջավայրից,
- բավարարվածությունը մասնագիտական ուսումնամեթոդական բազայից:

5.2 Արտաքին շահակիցներ

5.2.1 Ծրջանավարտների և գործատուների ՀՊՄՀ-ի ծառայությունների և իրականացվող կրթական ծրագրերի որակից բավարարվածության բացահայտման մեխանիզմներ

5.2.1.1 Ծրջանավարտների, ինչպես նաև այն կազմակերպությունների կարիքների գնահատումը, որտեղ աշխատում է շրջանավարտը, կատարվում է՝

- ֆոկուս-խմբերի տեսքով,
- հարցազրույցների կազմակերպման միջոցով,
- Կազմակերպությունների կողմից առաջարկությունների ուսումնասիրման միջոցով,

- շրջանավարտների հետ ՀՊՄՀ-ի ղեկավարության հանդիպումների և գրույցի կազմակերպման միջոցով,
- հետադարձ կապի այլ տեսակների կիրառման միջոցով:

5.2.1.2 Շրջանավարտների բավարարվածության գնահատումը իրականացվում է հետևյալ հարցերի շուրջ`

- ՀՊՄՀ-ում ստացված գիտելիքների և ունակությունների բավարար լինելը մասնագիտական աշխատանքում կիրառելու համար,
- Էթիկական կողմերը,
- մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակությունը և որակը,
- ՀՊՄՀ-ի կողմից տրամադրված կրթական ծառայությունների որակը,
- բավարարվածության վրա ազդող այլ գործոններ:

5.2.1.3 Գործատուների բավարարվածության գնահատումը իրականացվում է հետևյալ հիմնական հարցերի շուրջ`

- մասնագիտությունների կրթական ծրագրերի որակը և բովանդակությունը,
- ՀՊՄՀ-ի շրջանավարտների գիտելիքների և կարողությունների մակարդակը:

5.2.2 Դիմորդների կարիքների և պահանջների բացահայտման մեխանիզմներ

5.2.2.1 Հասարակության, դիմորդների և այլ արտաքին շահակիցների բավարարվածության գնահատումը իրականացվում է հետևյալ ճանապարհներով`

- շահակիցների կողմից ստացված կարծիքների և առաջարկների վերլուծություն:

5.2.2.2 Դիմորդների կարիքների և պահանջների գնահատումը իրականացվում է հետևյալ հիմնական մեխանիզմների միջոցով`

- հանդիպումներ և խորհրդատվություն ՀՊՄՀ-ի դասախոսական կազմի կողմից,
- դիմորդների հետ հարցումների կազմակերպում,
- դիմորդի արձագանքի վերլուծություն,
- պոտենցիալ դիմորդների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- դիմորդների հետ ֆոկուս-խմբերի կազմակերպում,
- տարբեր դպրոցների աշակերտների հետ միջոցառումների կազմակերպում, դիմորդների կարծիքների արձանագրում և վերլուծություն: